ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 115

«16» 03 2020թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արագածոտնի մարզի դատախազ Սարգիս Վասյայի Մնացականյանին փոխադրելու և Արմավիրի մարզի դատախազի պաշտոնում նշանակելու ու Արագածոտնի մարզի դատախազի պարտականությունների կատարումը նույն մարզի դատախազի տեղակալ Արմեն Նիկոլայի Նաղդալյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 15.09.2020թ. N 313-Ա և 317-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ս.Մնացականյանի կողմից՝ Արագածոտնի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ա.Նաղդալյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Հարությունյան Գագիկ - Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ

Գաբրիելյան Արամ - .	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Քոչարյան Նարինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ
Սարգսյան Մարիաննա -	Արագածոտի մարզի դատախազության տարածքային բաժնի պետի պաշտոնակատար:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 5-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ